ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Նարինե Տիտիզյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի 2023 թվականի դեկտեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 15-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Հարկաբյուջետային կայունություն» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է հարկաբյուջետային կայունությունը որպես մակրոտնտեսական կայունության և կայուն և ներառական երկարաժամկետ աճի պահանջ, մանրակրկիտ ակնարկով ներկայացվել է, թե ինչպես կարելի է գնահատել հարկաբյուջետային կայունությունը քաղաքականության և գործիքակազմի տեսանկյունից: Քննարկվել են նաև երկարաժամկետ հարկաբյուջետային ճնշումները և ռիսկերը, ինչպես նաև պարտքի կառավարման ռազմավարությունները և ԱՄՀ-ի կողմից օգտագործվող պետական պարտքի դինամիկայի գործիքը: Հատուկ ուշադրություն է դարձվել հարկաբյուջետային ճգնաժամերի և դրան հաջորդող հարկաբյուջետային ճշգրտումների դեպքերի ուսումնասիրությանը:

Այս հասկացությունները գործնականում լուսաբանելու համար իրականացվել է Վրաստանի դեպքի մանրակրկիտ ուսումնասիրություն՝ երկրի տվյալների բազայի կիրառմամբ, պետական պարտքի դինամիկայի գործիքի միջոցով իրականացվել է Վրաստանի պետական պարտքի դինամիկայի վերլուծություն տարբեր սցենարների դեպքում: Դասընթացի էական բաղադրիչը եղել են նաև գործնական սեմինարները:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ուղղված էր մակրոտնտեսական ներքին կայունության, մասնավորապես հարկաբյուջետային կայունության ռիսկերի վերլուծությանը, պետական պարտքի դինամիկայի և մակրոտնտեսական շրջանակների հետ կապերի ուսումնասիրմանը և վերլուծությունների իրականացմանը, ինչպես նաև ծերացման և կլիմայի փոփոխության մակրոտնտեսական և հարկաբյուջետային ազդեցությունների գնահատմանը:

5. Քննարկված թեմաները՝

1. Ընթացիկ հարկաբյուջետային կայունության ակնարկ
2. Պետական պարտքի դինամիկան և կապերը մակրոտնտեսական շրջանակների հետ
3. Պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցության կանխատեսում
4. Պետական պարտքի նպատակին հասնելու հարկաբյուջետային ճշգրտման ուղիները
5. Պետական պարտքի դինամիկան և գնաճը
6. Հարկաբյուջետային ռիսկեր, ճգնաժամեր և հարկաբյուջետային ճշգրտումներ
7. Պետական պարտքի դինամիկայի գործիքի ռեալիստական և սթրես թեստերի սցենարներ
8. Երկարաժամկետ հարկաբյուջետային ճնշումներ
9. Ծերացման մակրոտնտեսական ազդեցությունները
10. Համախառն ֆինանսավորման կարիքների նախագծում
11. Կլիմայի փոփոխություն և հարկաբյուջետային խոցելիություններ
12. Պետական պարտքի դինամիկայի գործիքը բնական աղետների դեպքում
13. Պարտքի կառավարում
14. Սուվերեն ռիսկի և պարտքի կայունության շրջանակ

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի

մասնակիցների հետ: Միաժամանակ շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները: Մասնավորապես, ներկայացվել է Վրաստանի տնտեսության ընթացիկ վիճակի գնահատումը՝ բացահայտելով հարկաբյուջետային կայունության ռիսկերը, ինչպես նաև դրա հիման վրա մշակված բազային և այլընտրանքային սցենարը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը: Հ. Հարությունյան

20 դեկտեմբեր, 2023թ.